ARMENIA EITI
Extractive Industries Transparency Initiative

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2019 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## ՆԱԽԱԲԱՆ

2019 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել Հայաստանի ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման նախապատրաստական աշխատանքներին, ԱՃԹՆ-ի երկրորդ ազգային զեկույցի կազմման համար անկախ ադմինիստրատորի ընտրության մրցույթի իրականացմանը, ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի և ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման համար համապատասխան ծառայությունների գնման ու աշխատանքների մեկնարկին, իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքների իրականացմանը: Մեկնարկել են իրական սեփականատերերի բացահայտման ռեգիստրի ստեղծման համար ծառայությունների գնման գործընթացը և Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության կազմման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում անցկացվել է ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի 1 նիստ, որի ընթացքում ԲՇԽ-ի կողմից հաստատվել են ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների, 2018 թվականի տարեկան հաշվետվության լրացումները, Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի փոփոխությունները, «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը, քննարկվել են 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը, իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերը, ներկայացվել են ընթացիկ աշխատանքները՝ ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթացին Հայաստանի նախապատրաստվածությունը, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի

կազմման աշխատանքների մրցույթի ընթացքը, տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրությունը, ԱՃԹՆ-ի նոր ստանդարտի շրջանակում առաջարկվող միջազգային ծրագրերը, իրական սեփականատերերի բացահայտմանը և ՀՀ ԱՃԹՆ-ի 2018թ. ազգային զեկույցի բացահայտումներին առնչվող հարցեր:

Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունը սեպտեմբերի 17-18-ն ուսուցողական այց է կատարել Միացյալ Թագավորություն՝ ուսումնասիրելու իրական սեփականատերերի բացահայտման ՄԹ-ի առաջավոր փորձը:

Հանդիպումներ են տեղի ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման շուրջ:

*Համաձայն Հայաստանի Հանրապետության 2019-2020թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:*

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-ի 2019Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ:<br><br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 3. ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* պայմանագիր կազմակերպության հետ, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ, առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակի կատարելագործում՝ այն օգտագործողի համար ավելի մատչելի դարձնելու նպատակով<br><br>*Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն | Աշխատանքների կատարումը սկսվել է երրորդ եռամսյակից՝ գնումների գործընթացի հետաձգման պատճառով |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. Կայքի ընթացիկ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

<table>
<tr><td>սպասարկում</td><td>Վերջնաժամկետը՝<br>ընթացիկ</td><td>Ընթացիկ</td><td>ընտրված կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն</td><td></td></tr>
<tr><td rowspan="2">ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ</td><td>Արդյունքը և վերջնաժամկետը</td><td>Իրականացման կարգավիճակը</td><td>Պատասխանատուները</td><td>Նշումներ</td></tr>
<tr><td>Արդյունքները՝<br>կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրություններ, իրավական ակտեր, նորություններ<br><br>Վերջնաժամկետը՝<br>ընթացիկ</td><td>Ընթացիկ</td><td>ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ</td><td></td></tr>
<tr><td rowspan="2">ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում</td><td>Արդյունքը և վերջնաժամկետը</td><td>Իրականացման կարգավիճակը</td><td>Պատասխանատուները</td><td>Նշումներ</td></tr>
<tr><td>Արդյունքները՝<br>տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ<br><br>Վերջնաժամկետը՝<br>ընթացիկ</td><td>Ընթացիկ</td><td>ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն</td><td></td></tr>
<tr><td>ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ</td><td>Արդյունքը և վերջնաժամկետը</td><td>Իրականացման կարգավիճակը</td><td>Պատասխանատուները</td><td>Նշումներ</td></tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)** | *Արդյունքները՝* սոցիալական ցանցերում հանքարդյունաբերությա ն և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն<br><br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Հանդիպումներ (այդ թվում մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն խմբակցությունների հետ<br><br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. «Հանքարդյունաբերրո ւթյան ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերրու թյան և ԱՃԹՆ վերաբերյալ տեղեկատվական/ ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերությա ն վերաբերյալ կրթական տեսանյութեր<br><br>*Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. «Հանքարդյունաբերրո ւթյան ոլորտում թափանցիկ և** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում / քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքերում** | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի վերաբերյալ մոդուլներ ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի և ակտիվիստների համար և դասընթացներ թիրախային խմբերի համար (ԲՇԽ, ՔՀԿ-ներ, տեղական խմբեր և ակտիվիստներ)<br><br>*Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում*

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է տվյալների վերլուծության էլեկտրոնային գործիքների զարգացման (ծրագրային ապահովման մշակման) ծառայության գնման գործընթացը՝ համաձայն ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի (ToR)՝ մեկ անձից գնման ընթացակարգով: Կնքվել է պայմանագիր «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի հետ և սեպտեմբերի 2-ից մեկնարկել են ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացման աշխատանքները: ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ է ունեցել «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են հիմնական գործողությունները, տվյալների և գործարքների ծավալը, հաստատվել առաջադրանքի տեսլականը և նպատակները, ներկայացվել հարթակի և կայքի նոր էջերի արտաքին ձևավորման տարբերակները և համաձայնեցվել վերջնական տարբերակը:

*Միջոցառում 3. ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում*

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն սկսել է իրականացնել ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի փոփոխության աշխատանքներ՝ համաձայնեցնելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հրապարակային հաշվետվությունների լրամշակված ձևաչափերին[1], ինչպես նաև արտադրության, արտահանման, զբաղվածության, հարկերի և տեղական հարկերի տվյալների և ոլորտի մակրոտնտեսական ցուցանիշների հիմման վրա ԱՃԹՆ-ի կայքի համապատասխան էջերում

[1]https://www.eiti.am/hy/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B1%D6%87%D5%A1%D5%B9%D5%A1%D6%83%D5%A5%D6%80

գծապատկերների ստեղծման աշխատանքներ:

*Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում*

«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից սկսել են շարունակվել Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքները:

*Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ*

Շարունակվել են Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի կայքի բովանդակության զարգացման աշխատանքները: Կայքում լրացվել է բոլոր բաժինների բովանդակությունը, տեղադրվել են ԱՃԹՆ-ի բաց գործելաոճի կանոններով հանրության համար հասանելի իրավական ակտերը, փաստաթղթերը և համապատասխան տեղեկություններն ու նորությունները, ինչպես նաև կայքի տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

*Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում*

Կայքում հրապարակվել են ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 871-Ն որոշումը և հրապարակային հաշվետվությունների xls ձևաչափերը, հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումների վերաբերյալ 10 նորություն[2], սեպտեմբերի 5-ին կայացած ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը[3], «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը[4] և դրանց անգլերեն թարգմանությունները, ինչպես նաև սեպտեմբերի 5-ին ԲՇԽ-ի նիստի ժամանակ ԲՇԽ-ի կողմից հաստավելուց հետո ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 1-ին և 2-րդ եռամսյակային հաշվետվությունները[5], Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խմբի քաղաքացիական հասարակության

[2] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

[3] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

[4] https://www.eiti.am/hy/%D5%A1%D5%B5%D5%AC

[5] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

խմբակցության ձևավորման, անդամների և այլընտրանքային անդամների թեկնածուների առաջադրման, ընտրության և լիազորությունների դադարեցման կարգը[6] ԲՇԽ-ի վերանայված աշխատակարգը[7] ։

*Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)*

Շարունակաբար թարմացվել են Facebook[8] YouTube[9] և Twitter[10] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

*Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում*

2019 թվականի հուլիսի 18-ին «Դիվելոփ Արմենիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել է «Հանքարդյունաբերության ոլորտում լավ կառավարման կլոր սեղան», որի ժամանակ ներկա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները քննարկել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և այդ աշխատանքներին քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցության հետ կապված հարցեր: Կլոր սեղանին մասնակցել է նաև ՀՀ ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ղեկավարը:

*Միջոցառում 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական / ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում*

*Տե՛ս հավելված 1*

*Միջոցառում 12. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում / քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքերում*

---

[6] https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D6%80%D5%A8

[7] https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3

[8] https://www.facebook.com/EITIArmenia/

[9] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A

[10] https://twitter.com/EITI_Armenia

*Տե՛ս հավելված 1*

| ՆՊԱՏԱԿԸ | **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Ուսուցում *Վերջնաժամկետը՝* Առաջին եռամսյակ | Իրականացվել է սահմանված վերջնաժամկետից ուշացումով | ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Իրավական ակտերի նախագծեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | Իրական սեփականետերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբ, Արդարադատության նախարարություն, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | Ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքների իրականացումը շարունակվել է նաև երրորդ եռամսյակում աշխատանքային հանդիպումներին բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավման և ներկայացված բոլոր նկատառումների քննարկման, ինչպես նաև միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թյան աշխատանքների շարունակման նպատակահարմարության պատճառով: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 16. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Իրավական ակտերի նախագծեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Արդարադատության նախարարություն | Աշխատանքների իրականացումը շարունակվել է նաև երրորդ եռամսյակում: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 17. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Տեխնիկական առաջադրանք<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Արդարադատության նախարարություն | Աշխատանքների իրականացումը շարունակվել է նաև երրորդ եռամսյակում՝ ԲՇԽ-ի կողմից դեռևս հաստատված չլինելու պատճառով: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* Հանրային ռեգիստր<br><br>*Վերջնաժամկետը՝* չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 14. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում*

Սեպտեմբերի 16-17-ը ուսուցողական այց է կազմակերպվել Միացյալ Թագավորություն՝ ուսումնասիրելու իրական սեփականատերերի բացահայտման ՄԹ-ի առաջավոր փորձը: Ուսուցողական այցին մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ) անդամ Լիլիա Շուշանյանը, Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ Սոնա Այվազյանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ Պերճ Խաչատրյանը, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ, ԲՇԽ-ի անդամ Արմեն Ստեփանյանը, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի տեղակալ Տաթևիկ Մկրտչյանը, ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային բաժիններում առանձին գործառույթների համակարգման խորհրդատու Անի Վարդերեսյանը և Երևանում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ազգային համակարգող Գոռ Խաչատրյանը:
Ուսուցողական այցի շրջանակում Հայաստանի Արդյունահող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության պատվիրակության համար կազմակերպվել է աշխատաժողով Միացյալ Թագավորության կառավարության Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունում (BEIS Department), հանդիպումներ են տեղի ունեցել Բաց կառավարման գործընկերության (ԲԳԿ) ներկայացուցիչներ Թոնու Բասուի, Ադնա Կարամեհիկ-Օատեսի, ՄԹ Միացյալ հակակոռուպցիոն բաժնի քաղաքականության գլխավոր խորհրդատու Սելմա Ֆիշերի և «Օփեն Օուներշիփ» իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստրի Ծրագրերի և քաղաքականության գլխավոր կառավարիչ Լուիս Ռասել-Պրիվատայի հետ: Այցի ժամանակ Հայաստանի պատվիրակությունը ՄԹ Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունից և Ընկերությունների պալատից տեղեկացել է Միացիալ Թագավորության ընկերությունների իրական սեփականատերերի ռեգիստր հիմնելու, իրավական կարգավորումների, ռեգիստրի վարման փորձի մասին, ՀՀ պատվիրակությանը ներկայացվել է Ընկերությունների պալատի՝ նշանակալի ազդեցություն ունեցող անձանց՝ իրական սեփականատերերի ռեգիստրի վարման գործառույթները, իրավական կարգավորումները, համագործակցությունն այլ պետական գործակալությունների և հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ երկրների հետ համագործակցության շրջանակը: Ներկայացվել է տեղեկատվության հավաքագրման, տվյալները հանրության համար հասանելի դարձնելու, անձնական տվյալների պաշտպանության, իրական սեփականատերերի բացահայտման պահանջների կատարման իրավական կարգավորումները: Հայաստանի պատվիրակության անդամներն ուսումնասիրել են ՄԹ ռեգիստրի տեխնիկական բնութագրիչները, առցանց և թղթային տարբերակներով տվյալների ներկայացման գործընթացները, ներկայացված տվյալների ստուգման ներդրված պրակտիկան: Վարչության ներկայացուցիչները ներկայացրել են նաև ընթացիկ բարեփոխումները և ոլորտում սպասվող միջազգային զարգացումները:
Բաց կառավարման գործընկերության (ԲԳԿ) ներկայացուցիչների և ՄԹ Միացյալ հակակոռուպցիոն բաժնի

քաղաքականության գլխավոր խորհրդատուի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի կառավարության կողմից իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքները, առաջիկա գործողությունները և համագործակցության հեռանկարները, իսկ «Օփեն Օուներշիփ» իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստրի Ծրագրերի և քաղաքականության գլխավոր ղեկավարըը Հայաստանի պատվիրակությանը ներկայացրել է կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները: Հանդիպման մասնակիցները քննարկել են իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման և հանրության համար դրա հասանելիության ապահովման խնդիրները, ինչպես նաև, Օփեն Օուներշիփի կողմից Հայաստանին խորհրդատվական և տեխնիկական աջակցություն տրամադրելու հնարավորությունները: Հայաստանի պատվիրակության խնդրանքով տրամադրվել են որոշակի նյութեր Օփեն Օուներշիփի վերաբերյալ, մասնավորապես հայտարարագրի ձևերը (նաև թղթային):
Միացյալ Թագավորություն ուսուցողական այցը կազմակերպվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում:

*Միջոցառում 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում*
*Միջոցառում 16. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից և շրջանառված նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն*

Ենթաօրենսդրական ակտերի մշակման ծառայությունների մատուցման համար Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում ընտրված համապատասխան խորհրդատվական ընկերության կողմից շարունակվում են իրականացվել ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները:
Մշակվել են «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման և «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագծերը, որոնց վերաբերյալ հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել ԱՃԹՆ-ի քարտուղարության, ԲՇԽ-ի և պատասխանատու լիազոր պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Վերջնական տարբերակները պատրաստ կլինեն չորրորդ եռամսյակում՝ ամփոփելով և հաշվի առնելով ներկայացված առաջարկները:

*Միջոցառում 17. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում*

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի կողմից հաստատվել է իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի տեխնիկական առաջադրանքը, որը կազմվել է ԱՃԹՆ-ի

քարտուղարության կողմից, շրջանառվել և քննարկվել է իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային անդամների կողմից, ինչպես նաև տրամադրվել է միջազգային քարտուղարության ու իրական սեփականատերերի բացահայտման հարցերով զբաղվող մի շարք միջազգային կազմակերպությունների՝ դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնելու:

*Միջոցառում 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում*

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել է իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար ծառայությունների գնման գործընթացը: ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակված իրական սեփականատերերի բացահայտման ռեգիստրի ծրագրային ապահովման մշակման տեխնիկական առաջադրանքը ԲՇԽ-ի անդամների և իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամների միջև շրջանառվելուց և հաստատվելուց հետո ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Համաշխարհային բանկի համաձայնությանը ներկայացնելու և ծառայությունների գնման գործընթացն ապահովելու համար:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 23. Վավերացման գործընթացի պատրաստվածության նախնական ստուգում և բացերի վերհանում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Նախավավերացման հարցաթերթեր<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է սահմանված վերջնաժամկետից ուշացումով | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 24. Վավերացման գործընթաց** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Վավերացում<br><br>*Վերջնաժամկետը՝* Սեպտեմբեր, 2019 երրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն, միջազգային վավերացնողներ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 25. ԲՇԽ-ի նիստերի** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **անցկացում** | *Արդյունքները՝*<br>ԲՇԽ-ի նիստեր<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>ընթացիկ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 27. ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ՀՀ վարչապետի որոշում, ԲՇԽ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Չորրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ-ի խմբակցություններ, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 28. ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ (անհրաժեշտության դեպքում)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ԲՇԽ-ի աշխատակարգ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>Չորրորդ եռամսյակ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>Պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համակարգում գնումների գործընթացի ապահովում<br><br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 36. ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվության կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվություն<br><br>*Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Իրականացվել է | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված նկատառումների հիման վրա փոփոխություններ և լրացումներ են կատարվել: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Եռամսյակային հաշվետվություններ<br><br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* Գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր<br><br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41. Թարգմանչական** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **աշխատանքներ** | *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 23. Վավերացման գործընթացի պատրաստվածության նախնական ստուգում և բացերի վերհանում*

GIZ-ի աջակցությամբ Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հուլիսի 8-10-ին հյուրընկալել է Գերմանիայի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Բորիս Ռեդերին՝ աջակցելու նախավավերացման գնահատման իրականացմանը, օգնելու մեզ բացահայտել բացերը, որոնք պետք է շտկվեն մինչև բուն վավերացման գործընթացի սկսվելը:
Նախավավերացման աշխատանքների շրջանակում հուլիսի 10-ին կազմակերպվել է աշխատաժողով ԲՇԽ-ի անդամների հետ: ԱՃԹՆ-ի քարտուղարության և ԲՇԽ-ի անդամներին տրամադրվել են նախավավերացման ուղեցույցը և գնահատման թերթիկը և Գերմանիայի վավերացման նյութերը:
Հուլիսի 10-ին տեղի է ունեցել ԱՃԹՆ-ի նախավավերացման աշխատաժողով Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի և ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է ԱՃԹՆ-ի վավերացման ընթացակարգը, մասնավորապես՝ ներկայացվել է Հայաստանի վավերացման ժամանակացույցի նախագիծը, ԲՇԽ-ի (խմբակցությունների) դերը և պարտականությունները, Գերմանիայի վավերացման փորձը:
Հանդիպման ընթացքում ներկայացվել է նախավավերացման գնահատման թերթիկը, քննարկվել են կոնկրետ պահանջները, դրանց իրականացման կարգավիճակը, վավերացման ընթացքում դրանց գնահատումը և հնարավոր ճշգրտումների կարիքը:
Աշխատաժողովի ընթացքում մասնակիցներին հետաքրքրող հարցերին հարց ու պատասխան ֆորմատով տրվել են պատասխաններ, քննարկվել են նաև ոլորտային այլ հարցեր:

*Միջոցառում 24. Վավերվացման գործընթաց*

ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից տեղեկացվել է, որ ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման աշխատանքների շրջանակում նոյեմբերի 4-8-ը նախատեսվում է այց Երևան: Միջազգային քարտուղարության վավերացնողները ԱՃԹՆ-ի քարտուղարությանն են ներկայացրել այն շահագրգիռ անձանց/կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ակնկալվում է անցկացնել հանդիպումներ/քննարկումներ այցի ժամանակ, ինչպես նաև տեսազանգով քննարկվել են կազմակերպչական և տեխնիկական այլ հարցեր: Քարտուղարության կողմից իրականացվել են վավերացման այցի կազմակերպչական և նախավավերացման հարցաթերթի մշակման աշխատանքները, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը տրամադրվել են վավերացման գործընթացի համար պահանջվող փաստաթղթերն ու անհրաժեշտ տեղեկատվությունը:

*Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում*

Սեպտեմբերի 5-ին կայացել է ԱՃԹՆ ԲՇԽ-ի հերթական նիստը: Նիստի ընթացքում հաստատվել են ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների, 2018 թվականի տարեկան հաշվետվության լրացումները, Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի փոփոխությունները, «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը, քննարկվել են 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը, իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերը, ներկայացվել են ընթացիկ աշխատանքները՝ ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման գործընթացին Հայաստանի նախապատրաստվածությունը, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման աշխատանքների մրցույթի ընթացքը, տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրությունը, ԱՃԹՆ-ի նոր ստանդարտի շրջանակում առաջարկվող միջազգային ծրագրերը, իրական սեփականատերերի բացահայտմանը և ՀՀ ԱՃԹՆ-ի 2018թ. ազգային զեկույցի բացահայտումներին առնչվող հարցեր:[11]

*Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխապանքային խմբերի հանդիպումների անցկացում*

Հուլիսի 12-ին տեղի է ունեցել իրական սեփականատերերի բացահայտման ռեգիստրի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքի նախագծի շուրջ քննարկում, օգոստոսի 6-ին՝ իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքի վերջնականացման, մասնավորապես, open source գործառույթի նախատեսման թեմայով հանդիպում, օգոստոսի 12-ին, օգոստոսի 22-ին, սեպտեմբերի 19-ին՝ իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խմբի հանդիպում իրական սեփականատերերի ենթաօրենսդրական ակտերի նախագծերի շուրջ, օգոստոսի 27-ին՝ ԲՇԽ-ի անդամների աշխատանքային քննարկում 2020 թվականին ԱՃԹՆ-ի ընդգրկման շրջանակի ընդլայնմանն առնչվող հարցերի ու նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի շուրջ:

*Միջոցառում 27. ԲՇԽ-ի նոր անդամների ներկայացում և ԲՇԽ-ի կազմի համալրում*

ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցությունը ձեռնարկել է խմբակցության անդամների և այլընտրանքային անդամների ընտրական գործընթաց: Խմբակցությունը կազմակերպել է ընտրակարգի վերաբերյալ քննարկումներ հանքարդյունաբերության ոլորտի առնչությամբ գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից կազմակերպվել է 4 հանդիպում քաղաքացիական հասարակության լայն շրջանակների մասնակցությամբ: Ընտրակարգի

[11] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

վերջնական տարբերակը տրամադրվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը: Վերջինիս դիտարկումներն ընդունելուց հետո, համաձայն այդ ընտրակարգի, հոկտեմբերի 1-ին իրականացվելու են քաղաքացիական հասարակության խմբակցության անդամների ընտրությունները:

*Միջոցառում 28. ԲՇԽ-ի աշխապակարգում փոփոխություններ (անհրաժեշտության դեպքում)*

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից ԲՇԽ-ի աշխատակարգում փոփոխություններ կատարելու առաջարկ է ներկայացվել՝ մասնավորապես առաջարկելով հստակեցնել ԲՇԽ-ի անդամների և այլընտրանքային անդամների լիազորությունների ժամկետների հաշվարկման կարգը: Աշխատակարգի փոփոխություններն ու լրացումները մշակելիս հաշվի են առնվել նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված առաջարկությունները: Աշխատակարգը[12] ԲՇԽ-ի անդամների ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) հաստատվել է սեպտեմբերի 5-ին կայացած ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին:

*Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն*

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ է ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019-2020թթ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման քննարկման շուրջ: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ շարունակում են իրականացվել իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները, կազմակերպվել է ուսուցողական այց Միացյալ Թագավորություն՝ ուսումնասիրելու իրական սեփականատերերի բացահայտման ՄԹ-ի առաջավոր փորձը, մեկնարկել են Հայաստանի ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության կազմման աշխատանքները:
ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարությանը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից ներկայացվել է «Խթանելով Գենդերային հավասար ներկայացվածությունը ԱՃԹՆ-ի գործընթացում» ծրագրի առաջարկ 2019թ. ԱՃԹՆ-ի նոր ստանդարտի շրջանականում, որով նախատեսվում է, որ ԲՇԽ-ն իր ներկայացվածության մեջ հաշվի առնի գենդերային հավասարակշռությունը և զբաղվածության վերաբերյալ տվյալները բացահայտեն ընկերության, գենդերային և մասնագիտական մակարդակով: Ինչպես նաև խրախուսվում է ներկայացնել ոլորտում գենդերային նկատառումներն ու սոցիալական ներգրավվածությունը: Քննարկվել է նաև Ուկրաինայի ԱՃԹՆ-ի կողմից ԱՃԹՆ-ն իրականացնող մի շարք երկրների փորձի փոխանակման ծրագրի առաջարկը, որը քննարկվելու է հոկտեմբերին Ադիս Աբեբայում կայանալիք ԱՃԹՆ-ի խորհրդի նիստի ժամանակ և ներկակացվելու է Համաշխարհային բանկին: Առաջարկվող ծրագրի մասնակից երկրներն են Ուկրաինան, Հայաստանը, Ալբանիան և երկրներ, որոնք ցանկանում եմ միանալ ԱՃԹՆ-ին, մասնավորապես Թունիսը, Լիբանանը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կազմակերպել մի

[12] "https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%87%D4%BD-%D5%AB-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3"

շարք հանդիպումներ, փորձի փոխանակման աշխատաժողովներ ծրագրի մասնակից երկրների մասնակցությամբ իրական սեփականատերերի բացահայտման, պայմանագրերի հրապարակման, քաղաքացիական հասարակության մասնակցության հզորացման, ԱՃԹՆ-ի նոր պահանջների ներդրման թեմաներով: Ծրագրի նախատեսվող ժամկետներն են 2020թ. հունիսից 2021թ. հունիսը:

*Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք*

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ՀՀ ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրով տվյալ ժամանակահատվածի համար սահմանված միջոցառումների պլանավորման և իրականացման աշխատանքները՝ համաձայնեցնելով դոնոր կազմակերպությունների հետ: Կազմակերպվել են հանդիպումներ շահագրգիռ կողմերի, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության և իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խմբերի անդամների հետ՝ ապահովելով ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներն ու համագործակցությունը: Կազմակերպվել է ԲՇԽ-ի մեկ նիստ: Քարտուղարության կողմից իրականացվել են Հայաստանի՝ ԱՃԹՆ-ի առաջին վավերցման գործընթացի նախապատրասխական աշխատանքները:

*Միջոցառում 36. ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետվության կազմում և հասպապում*

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 տարեկան հաշվետությունը ներկայացվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության դիտարկմանը: Վերջինիս նկատառումները հաշվի առնելով՝ 2018 տարեկան հաշվետության մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք մասնավորապես վերաբերում էին ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջ 1-ի և պահանջ 7-ի կատարողականի գնահատմանը[13]:

*Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հասպապում*

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019 թվականի երկրորդ եռամսյակի հաշվետվությունը, որն առաջին եռամսյակի հաշվետվության հետ հաստատվել է ԲՇԽ-ի կողմից սեպտեմբերի 5-ին կայացած ԲՇԽ-ի նիստի ժամանակ և հրապարակվել ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում[14]:

---

[13] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

[14] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

*Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ*

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱՃԹՆ-ի քարտուղարության պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ ԱՃԹՆ-ի 2019թ. ստանդարտի նոր պահանջների, Հայաստանում ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացին նախապատրաստման և ԱՃԹՆ-ի միջազգային վավերացման աշխատանքների շրջանակում նոյեմբերի 4-8-ը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության վավերացնողների՝ Հայաստան այցի կազմակերպչական հարցերի, իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի նախագծերի, Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018 թվականի տարեկան հաշվետվության, ԲՇԽ-ի փոփոխված աշխատակարգի և ընթացիկ հարցերի շուրջ:

Սեպտեմբերի 16-17-ը իրականացվել է ուսուցողական այց Միացյալ Թագավորություն: Ուսուցողական այցի հիմնական նպատակն էր իրական սեփականատերերի բացահայտման ՄԹ-ի առաջավոր փորձի ուսումնասիրությունը: Ուսուցողական այցի շրջանակում Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է Միացյալ Թագավորության կառավարության Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունում (BEIS Department) կազմակերպված աշխատաժողովին: Աշխատաժողովին մասնակցել են ՄԹ-ի Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչության տնօրենի ընկերությունների օրենքի բարեփոխումների գծով օգնական Սթիվեն Ուեբսթերը, իրական սեփականատերերի թափանցիկության քաղաքականության խորհրդատու Օլգա Բինիոնսը, Ընկերությունների պալատի նշանակալի ազդեցություն ունեցող անձանց համապատասխանության և տվյալների պաշտպանության և իրավական ապահովման բաժնի ղեկավար Լի Ռոբինսը, քաղաքականության ավագ խորհրդատու Լին Քրոսը և տեխնիկական ճարտարապետ Քրիս Մորգանը:

Հանդիպում է տեղի ունեցել նաև ՄԹ ԱՃԹՆ-ի պատասխանատուների հետ:

Սեպտեմբերի 17-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունը Միացյալ Թագավորություն այցի շրջանակում հանդիպումներ է ունեցել Բաց կառավարման գործընկերության (ԲԳԿ) ներկայացուցիչներ Թոնու Բասուի, Ադնա Կարամեհիկ-Օատեսի և ՄԹ Միացյալ հակակոռուպցիոն բաժնի քաղաքականության գլխավոր խորհրդատու Սելմա Ֆիշերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի կառավարության կողմից իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքները, առաջիկա գործողությունները և համագործակցության հեռանկարները: Հանդիպում է կայացել նաև նաև «Օփեն Օուներշիփ» իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստրի Ծրագրերի և քաղաքականության գլխավոր ղեկավար Լուիս Ռասել-Պրիվատայի հետ:

*Միջոցառում 40. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում*

Պատրաստվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը վճարելու 2019 թվականի տարեկան անդամավճարի վճարումն ապահովելու համար համապատասխան փաստաթղթերի փաթեթը և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմի հաստատմանն ու վճարման իրականացմանը:

*Միջոցառում 41. Թարգմանչական աշխատանքներ*

Հաշվետու ժամանակահատվածում անգլերեն են թարգմանվել ԱՃԹՆ-ի 2018 թվականի տարեկան հաշվետվության փոփոխություններն ու լրացումները, իրական սեփականատերերի բացահայտման ռեգիստրի ծրագրային ապահովման մշակման տեխնիկական առաջադրանքը, «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթուղթը, 2019թ. սեպտեմբերի 5-ի ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ զեկույցի կազմում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՇԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝*<br>ՀՀ կառավարության որոշում<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>երկրորդ եռամսյակ | Իրականացվել է սահմանված վերջնաժամկետից ուշացումով | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 45. Անկախ ադմինիստրատորի ընտրություն (մրցույթ և հաստատում)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>Անկախ ադմինիստրատորի մրցույթի հայտարարություն, մրցույթ, անկախ ադմինիստրատորի հետ կնքված պայմանագիր<br><br>*Վերջնաժամկետը՝*<br>երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 46. Հայաստանի ԱՃԹՆ-ի** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **2019թ-ի զեկույցի մշակում** | *Արդյունքները՝* ԱՃԹՆ-ի զեկույց<br><br>*Վերջնաժամկետը՝* չորրորդ եռամսյակ | Չի իրականացվել | Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 42. ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՇԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն*

Հուլիսի 11-ին կայացած ՀՀ կառավարության նիստում ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 871-Ն որոշումը։ [15] Մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը ՀՀ կառավարությամբ սահմանված պետական մարմինները և մետաղական հանքաքար արդյունահանող բոլոր ընկերությունները ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկակացվել ՀՀ կառավարության որոշամբ սահմանված հաշվետվությունները։

*Միջոցառում 45. Անկախ ադմինիսփրափորի ընփրություն (մրցույթ և հասփափում)*

Անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը ներկայացվել է ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովին և հաստատվել է 2019 թվականի հուլիսի 4-ի նիստին, որից հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից շարունակվել է գնման գործընթացը։

*Միջոցառում 46. Հայասփանի ԱՃԹՆ-ի 2019թ-ի զեկույցի մշակում*

Անկախ ադմինիստրատորի ծառայությունների գնման գործընթացի հետաձգմամբ պայմանավորված Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. զեկույցի մշակման աշխատանքները կմեկնարկեն չորրորդ եռամսյակում։

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի համապատասխանեցում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 51. Հայաստանի ԱՃԹՆ-ի** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[15] https://www.e-gov.am/gov-decrees/item/32181/

| | | | | |
|---|---|---|---|---|
| **շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում** | *Արդյունքը*՝ Հայաստանի ԱՃԹՆ շրջանակի ընդլայնման մասին ԲՇԽ-ի որոշում, Տեխնիկական առաջադրանք<br><br>*Վերջնաժամկետը*՝ Երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | Աշխատանքները հետաձգվել են մի շարք հարցերի վերաբերյալ ԲՇԽ-ի խմբակցությունների տարբերվող տեսակետների ներկայացման արդյունքում նախագծի լրամշակման անհրաժեշտության պատճառով: չհամընկնման պատճառով |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ Նախնական ուսումնասիրություն, իրավական ակտերի նախագծում<br><br>*Վերջնաժամկետը*՝ Երրորդ եռամսյակ | Չի իրականացվել | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ | տես. Միջոցառում N51 |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 53. Հայաստանի ԱՃԹՆ շրջանակի ընդլայնման հետ կապված քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ (ընկերություններ, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլ մասնակիցներ)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ հանդիպում, քննարկում<br><br>*Վերջնաժամկետը*՝ Երրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմին, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 51. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում*

*Միջոցառում 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության իրականացում*

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները:

*Միջոցառում 53. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ (ընկերություններ, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլ մասնակիցներ)*

Համաձայն ապրիլի 16-ի ԲՇԽ-ի նիստի ժամանակ ԱՃԹՆ-ի 2020 թվականի զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը քննարկելիս կայացած որոշմանը՝ նախքան տեխնիկական առաջադրանքը հաստատելն աշխատանքային կարգով քննարկել 2020 թվականին ԱՃԹՆ-ի ընդգրկման շրջանակի ընդլայնմանն առնչվող հարցերը՝ օգոստոսի 27-ին տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում շահագրգիռ կողմերի հետ, որի ժամանակ քննարկվեցին մասնավորապես հետևյալ հարցերը՝

- մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ծուլարանների ֆիսկալ քաղաքականությունը, հարկերի հաշվարկման կարգն ու տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչներում գործունեության դասակարգումը, Հայաստանում գործունեություն ծավալող ծուլարաններից մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ծուլարաններին ըստ գործունեության տեսակների տարանջատելու և ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու հարցերը,
- ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ոլորտը ԱՃԹՆ-ի շրջանակում ընդգրկելու և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունները հաշվետու դարձնելու նպատակահարմարությունը,
- ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտից պետության եկամուտների չափը և ոլորտը ԱՃԹՆ-ի շրջանակում դիտարկելու հարցը:

Նախքան հանդիպումը ՊԵԿ-ի կողմից տրամադրվել են ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունների և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունների կողմից 2018 թվականի համար պետական բյուջե վճարված հարկերի և

| |
|---|
| վճարումների մասին տեղեկատվություն:<br>2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի նախագիծը ներկայացվեց սեպտեմբերի 5-ին կայացած ԲՇԽ-ի նիստին, որի ընթացքում ԲՇԽ-ն, հաշվի առնելով նաև ֆինանսական միջոցների սահմանափակ լինելու հանգամանքը, որոշում կայացրեց առաջիկա նախնական ուսումնասիության շրջանակում ուսումնասիրել ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման, (ներառյալ հանքաքարի և խտանյութի առք ու վաճառքով զբաղվող տեղական կազմակերպությունների գործունեությունը) ոլորտները, իսկ հաջորդ տարի դիտարկել ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտը:[16] Համաձայն նիստի քննարկումների և ԲՇԽ-ի որոշումների՝ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից կատարվում են համապատասխան փոփոխություններ նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքում, որից հետո տեխնիկական առաջադրանքի լրամշակված տարբերակը կներկայացվի ԲՇԽ-ին՝ էլեկտրոնային եղանակով հաստատելու: |

| ՆՊԱՏԱԿԸ | Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդնում | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ Ճանապարհային քարտեզի միջոցառումներ<br><br>*Վերջնաժամկետը*՝ Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ Հանդիպումներ<br><br>*Վերջնաժամկետը*՝ Ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |
| *Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման* | | | | |

[16] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/MSG_meeting_minute_05_09_2019.pdf

*աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում*

ՊՀ աշխատանքային խմբին տրամադրվել է «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծություն և ոլորտի ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության նախագիծը, որի վերաբերյալ ներկայացված դիտարկումների շուրջ հուլիսի 25-ին տեղի է ունեցել աշխատանքային խմբի հանդիպում-քննարկում ուսումնասիրությունը կազմող «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության ներկայացուցիչների հետ:

Հուլիսի 26-ին ԲՇԽ-ի անդամները և քարտուղարության ներկայացուցիչները հանդիպում են ունեցել Համաշխարահային բանկի աջակցությամբ իրականացվող «Հանքերի փակման և տնտեսական վերականգնման հետազոտություն Կենտրոնական Ասիայում և Կովկասում» ծրագրի շրջանակում հետազոտություն իրականացվող SRK Consulting ընկերության ներկայացուցիչների հետ և քննարկել առկա խնդիրները և ԲՇԽ-ի տեսակետների դրանց լուծման վերաբերյալ:

*Միջոցառում 56. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ*

Հուլիսի 26-ին՝ Շրջակա միջավայրի նախարարությունում տեղի է ունեցել ԱՃԹՆ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության հայեցակարգային փաստաթղթի մշակման շուրջ վերջին աշխատանքային հանդիպումը՝ ներկայացված հիմնական ուղղությունների շուրջ: ՊՀ աշխատանքային խմբի կողմից սահմանվել են ՊՀ հինգ հիմնական ուղղություններ՝ պետության բարեվարքություն, գործարար միջավայրի բարեվարքություն, դրական ժառանգության ապահովման պլանավորում, սոցիալական պատասխանատվություն և բնապահպանական պատասխանատվություն, ու յուրաքանչյուր ուղղության համար ենթաուղղություններ/միջոցառումներ, որոնցից ՊՀ աշխատանքային խմբի կողմից քվեարկությամբ ընտրվել են առաջնահերթությունները Հայաստանի համար:[17]

| ՆՊԱՏԱԿԸ | ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում, ԱՃԹՆ-ի մեյնսթրիմինգ, տվյալների համակարգային բացահայտման խրախուսում | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 58. Հրապարակային** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[17] https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/MSG%20Procedures/Responsible_Mining_Roadmap_ARM.pdf"

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցում իրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակն օգտագործելու վերաբերյալ** | *Արդյունքը՝* ուսուցում<br><br>*Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ | Չի իրականացվել | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, անկախ աուդիտոր | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 59.** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| **Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում, կատարող կազմակերպության ընտրություն** | *Արդյունքը՝* տեխնիկական առաջադրանք, պայմանագիր<br><br>*Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 60.** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| **Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի** | *Արդյունքները՝* Ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ի գործիքակազմով քարտեզագրում, ճանապարհային քարտեզ/գործողությունների ծրագիր<br><br>*Վերջնաժամկետը՝* երրորդ եռամսյակ | Չի իրականացվել | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ընտրված կազմակերպություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում** | | | | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 58. Հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցում հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակն օգտագործելու վերաբերյալ*

Հրապարակային հաշվետվությունների ներկայացման առցանց հարթակն օգտագործելու վերաբերյալ հրապարակային հաշվետվություններ ներկայացնող պետական մարմինների և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների ուսուցումը հետաձգվել է՝ հուլիսի 11-ին ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման համաձայն առցանց հարթակում հաշվետվությունների ձևաչափերի փոփոխությունների իրականացման և Անկախ ադմինիստրատորի ընտրության հետաձգման պատճառով (Տե՛ս Միջոցառում 3 և 45): Սակայն հաշվետու մարմիններին տրամադրվել են լրամշակված հրապարակային հաշվետվությունների ձևերը (xls ֆայլ) և մինչև օգոստոսի 1-ը հաշվետվությունների xls ֆայլերը և դրանց pdf տարբերակները ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ և eiti@gov.am հասցեին՝ կից տրամադրելով նաև հրապարակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների ճշգրտությունը և հավաստիությունը հավաստող գրություն՝ ստորագրված համապատասխան պետական մարմնի կամ ընդերքօգտագործող ընկերության ղեկավարի ստորագրությամբ:

*Միջոցառում 59. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում, կատարող կազմակերպության ընտրություն*

*Միջոցառում 60. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգային բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում*

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակված ԱՃԹՆ-ի տվյալների համակարգային բացահայտման (mainstreaming-ի) իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը ԲՇԽ-ի անդամների միջև շրջանառվելուց հետո հաստատվել է ԲՇԽ-ի կողմից, ու սկսվել է ծառայությունների գնման գործընթացը, որն իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ՝ «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI)

| |
|---|
| իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում: |

*Հավելված 1*

**2019 թվականի երրորդ եռամսյակում «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները[18]**

*Տեղեկատվությունը տրամադրվել է «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից*

[18] Տեղեկատվությունը տրամադրվել է Թրանսպարենսի ինտերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից

*1. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում*

«Էկոլուր» ՀԿ հաշվետու ժամանակաշրջանում պատրաստել է մատչելի տեղեկատվական փաթեթ ԱՃԹՆ-ի Ստանդարտի, ԱՃԹՆ-ի զեկույցի, ԲՇԽ-ի  գործունեության վերաբերյալ (իրազեկման թերթիկներ), ինչպես նաև ներկայացրել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վերաբերյալ ԱՃԹՆ-ի զեկույցում բացահայտված տվյալները համապատասխան ազդակիր համայնքներում, իրականացրել հետազոտություն ազդակիր համայնքներում այդ ընկերությունների գործունեության սոցիալական ազդեցության վերաբերյալ:

Ազդակիր համայնքների բնակավայրերում (Կապան, Քաջարան, Արծվանիկ, Սյունիք և Աճանան) բնակիչների հետ անցկացվել են սոցիալական հետազոտություն Քաջարանի հանքի գործունեության՝ համայնքի վրա ազդեցության վերաբերյալ: Արդյունքում, ամրագրվել է համայնքների վրա Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեության սոցիալական ազդեցության վերաբերյալ բնակչության պատկերացումները և ներկայացվել բացասական ազդեցությունների հաղթահարմանն ուղղված առաջարկություններ[19]:

Պատրաստվել են իրազեկման թերթիկներ ԱՃԹՆ-ի ամենակարևոր բաղադրիչների և քաղաքացիական հասարակության իրավունքների և շահերի պաշտպանության, վերաբերյալ, որոնք փակցվել են տեսանելի վայրերում նշված համայքներում:

Հաշվետու ժամանակահատվածում «Էկոլուր» ՀԿ պաշտոնական կայքում հրապարակվել են մի շարք նորություններ[20] :

*2. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում*

---

[19] https://ecolur.org/hy/news/mining/---/11574/

[20] https://ecolur.org/hy/news/mining/--/11496/
https://ecolur.org/hy/news/mining/-/11491/

https://ecolur.org/hy/news/mining/--/11485/

https://ecolur.org/hy/news/mining/-/11473/

1. Առաջին հատվածում նկարագրված նյութերը քննարկելու և տարածելու նպատակով «Էկոլուր» ՀԿ-ն հանդիպումներ է իրականացրել 2019 թվականի օգոստոսի 1-ին և 2-ին Կապան, Քաջարան, Արծվանիկ, Սյունիք և Աճանան համայնքներում (մասնակցել են 74 հոգի):

Տեղի բնակչությանը, մասնակից տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին «Էկոլուր» ՀԿ փորձագետ Հարություն Մովսիսյանը ծանոթացրեց ԱՃԹՆ-ի գործընթացը, ցուցադրվել է ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից պատրաստված տեսանյութը, բաժանվել են իրազեկման թերթիկները, ներկայացվել են հանքերի գործունեության վերաբերյալ տեղեկատվական փաթեթը:

2. «Կապան նախաձեռնությունը» և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ները իրենց մոնիտորինգն իրականցնելու նպատակով (նայել 2019 թվականի հունվար-մարտ ամիսների հաշվետվությունը) հանդիպումներ անցկացրեցին համապատասխանաբար Սյունիքի մարզում՝ Արծվանիկ համայնքում հուլիսի 20-ին (29 մասնակից) և օգոստոսի 1-2-ին «Էկոլուր» ՀԿ կողմից Կապան, Քաջարան, Արծվանիկ, Սյունիք և Աճանան համայքներում կազմակերպված հանդիպումներին և հուլիսին Լոռվա մարզում՝ Օձուն (5 մասնակից), Շնող (5 մասնակից), Ախթալա (4 մասնակից):

3. «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի հետ համատեղ ընտրվեցին 2019 թվականի մայիսի 27-28-ին, Կոտայքի մարզի Աղվերան համայնքում կազմակերպված դասընթացին մասնակցած հինգ հետաքննող լրագրողներ (դասընթացի ընթացքում ներկայացվել են ոլորտում հետաքննական լրագրության, կիրառվելիք մեդոթաբանության առանձնահատկությունները, ԱՃԹՆ-ի գործընթացը, ոլորտը կարգավորող օրենսդրությունը): Մասնակիցներին առաջարկվել էր լրամշակել թեմաները և հետաքննության իրենց թեմաները ներկայացնել դրամաշնորհի (մանրամասն տես նախորդ հաշվետվությունը): Ընտրված հետաքննող լրագրողներն իրենց հետաքննության արդյունքները կներկայացնեն սույն թվականի նոյեմբեր ամսին:

4. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ/EITI) խթանում» ծրագրի շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ), ակտիվ երիտասարդական խմբերի և ՏԻՄ ներկայացուցիչների համար ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնը Թրանսպարենսի ինտերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ համատեղ հուլիսի 1-ին դասընթաց է կազմակերպել Ալավերդիում (26 մասնակից): Դասընթացը վարել են կենտրոնի ընտրված փորձագետները: Իսկ Ասպարեզ լրագրողների ակումբի հետ համատեղ կազմակերպվեց ամառային ճամբար 80 մասնակիցների համար, որտեղ քննարկվեցին բնապահպանական թեմաներով դասընթացներ, ներառյալ ներկայացվեց ԱՃԹՆ գործընթացը (կենտրոնի փորձագետները մշակել են մեթոդաբանությունը և վարել դասընթացները):